# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, (0224) 21110, info@yeghvard.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 27

## ԵՂՎԱՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի N 5 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ***եղվարդ համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել համայնքի ավագանու 2016 թվականի մայիսի 19-ի N 5 արտահերթ նիստի օրակարգը.

1) Եղվարդ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 21-ի N 60-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ
2. ԱՎԱԳՅԱՆ ԱՂԱՍԻ
3. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՋՈՀՐԱԲՅԱՆ ՌԱՖԻԿ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՄ
7. ՍՏԵՓԱՆՅԱՆ ԽՈՍՐՈՎ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, (0224) 21110, info@yeghvard.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 28-Ն

## ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 60-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի, հիմք ընդունելով Եղվարդ համայնքի ղեկավարին 2016 թվականի մայիսի 17-ին <<Հանուն հաղթանակի>> քաղաքացիական նախաձեռնության նախաձեռնող խմբի մի շարք անդամների կողմից ներկայացված դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.***

1. ԼեռնայինՂարաբաղիՀանրապետության պաշտպանության բանակի կարիքների համար անհրաժեշտ գույք ձեռք բերելու նպատակով Եղվարդ համայնքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 21-ի << Եղվարդ համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 60-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման N 2 և N 3 հավելվածների, բյուջեի ծախսային մասի.

ա) 5.2-1 ծրագրի 5112 հոդվածի <<18000.0>> թիվը փոխարինել <<10000.0>> թվով.

բ) 1.6-1 ծրագրի 5122 հոդվածի <<1000.0>> թիվը փոխարինել <<4500.0>> թվով.

գ) 1.6-1 ծրագրի 5129 հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<4500.0>> թվով:

2. Գնումները կատարել բանակցային ընթացակարգով՝ առանց հայտարարություն հրապարակելու:

3. Ձեռք բերված գույքը նվիրաբերել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

2. ԱՎԱԳՅԱՆ ԱՂԱՍԻ

3. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՐՄԱՆ

4. ԶՈՀՐԱԲՅԱՆ ՌԱՖԻԿ

5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՄ

7. ՍՏԵՓԱՆՅԱՆ ԽՈՍՐՈՎ

8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ